

Տարեկան գինը 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

Օտարաբողոքացիք գինում են ուղղակի

Тифлис. Редакция „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւելու 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն օր 4 ժամ:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաջանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ

1879 թվին

ԿՐ. ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ԼՐԱԿՆ ՕՐ, բացի տոն և տոներին հետեւեալ օրերէն:

Լրագրի դիրքը և պրոգրամման նոյն են մնում: Մենք ստանում ենք ՍԵՓԼԿԱՆ ԷԼԵՌԵԳԻՐՆԵՐ: ՄՇԱԿԻ տարեկան գինը 10 րուբլ է, կես տարվանը 6 րուբլ: Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՐԱԳՐԱՏԱՆԻ մէջ:

ԼՈՒՆԱԶԻՆ ԷԼԵՄԵՆՏԱՐԻ Ժախվում են 5 կոպէկով հատը: Օտար քաղաքներից պէտք է գիմել հետեւեալ հասցեով՝ ТИФ-ЛИСЪ Редакция „Мшакъ“:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԽՐԱԳՐԱՏԱՆԻ ԿՈՂՄԻՏԵ

ԽՐԱԳՐԱՏԱՆԻ ԱՆԿԱՍ ԿԱՌԱՐԱՆՆԵՐՈՎ
ՄՇԱԿԻ երէկվայ № 212 չը կարողացանք
երէկ հրատարակել այլ հրատարակում ենք
այդ համարը այսօր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեղաւոր է արդեօք հայ կինը: Ներքին տե-
սու թիւին, Նինա Անդրեիկովա սպանման գոր-
ծը: Նամակ Ղարսից: Ներքին լուրեր: Արտա-
քին տեսու թիւին: Խորէն Նարեկ եպիսկո-
պոսի ճառը: Ձրանսիա: Նամակ Թիւրքիայից:
Նամակ Խմբագրին: Յայտարարութիւններ:

ՄԵԼԱՒՈՐ ԵՒ ԱՐԴԵՐԻ ՀԱՅ ԿԻՆԸ

Մեր երէկվայ համարում տրա-
ված բանասիրական զար-
թեցում է մեր մէջ հետեւեալ
դատողութիւնները: Մեղաւոր է
արդեօք հայ կինը, որ նա չէ ապ-
րում գաղափարով, չէ համակրում
հայութեանը, անտարբեր է դէպի
ազգութիւնը, իր ընտանիքում
անսիրտ, անհոգի էակ է:

Կինը միշտ արտայայտութիւն է
իր ժամանակի հասարակութեան:
Կինը մի հասարակութեան մէջ
լինում է այնպէս, ինչպէս նրան
դաստիարակում է տղամարդը,
կրթում է նրան հասարակութիւ-
նը: Եթէ կինը դարձաւ պրճ-
նամէր է, անհոգի աղջիկ է, վատ
մայր է, — այդ բոլորի մէջ մե-

ղաւոր է հասարակութիւնը:
Ի՞նչ պէտք է սովորէր հայ
կինը իր ընտանիքից՝ շահասիրու-
թիւն, հարստահարութիւն, անձ-
նական հաշիւներ, անտարբերու-
թիւն դէպի հասարակաց օգուտ-
ները և շահերը: Ի՞նչ պէտք է
սովորէր հայ կինը կրթեալ բարձր
ուսում ստացած երիտասարդու-
թեանց՝ դարձաւ խոստովութիւն, նա-
խանձ, անբարոյականութիւն, փո-
ղասիրութիւն, թղթախաղ, ինտ-
րիզաներ, անտարբերութիւն դէպի
ազգային շահերը, արհամարհանք
դէպի մայրենի լեզու:

Դարերով մեր ազգը պահպա-
նող ազգային հիմնարկութիւնը
է կէղեցի էր: Ի՞նչ էր սովո-
րում հայ կինը հայ եկեղեցում:
Նա ջերմեւանդութեամբ զնում
էր եկեղեցի, ներկայ էր գտնվում
ժամասացութեանը և ոչինչ չէր
հասկանում մեռած, զբաւար լե-
զուով կատարված պատարագի
մէջ, անհասկանալի լեզուով կար-
գացած աւետարանի մէջ: Եկե-
ղեցում նա ոչ մի կենդանի, իր
սիրտը կամ խելքը կրթող խօսք
չէր լսում, իսկ ինչ որ լսում էր,
չէր հասկանում: Եւ եթէ հաս-
կանար էլ, — ո՞վքեր են եկեղեցու
հովիւները, անկիրթ ուսուի քա-
հանները....

Ի՞նչ օրինակներ է տեսնում
հայ աղջիկը իր հօր ընտանիքում, հայ
կինը իր ամուսնուց: Չը խօսեք բա-
րոյական կողմի վրա... Ինչ օրի-

նակներ է տեսնում նա ազգային
գաղափարի վրա, մայրենի լեզուի
վերաբերութեամբ հայեացքների
վրա, — կատարեալ արհամարհանք
դէպի ազգը և դէպի մայրենի լե-
զուն:

Եւ ահա այդ տեսակ անտար-
բեր, անսիրտ, անբարոյական շը-
ջանում զարգանում է, կրթվում է
թէ թիֆլիսցի և թէ գաւառացի
հայ օրիորդը. այդ օրիորդը պէտք
է դառնայ կին, պէտք է դառնայ
մայր... պէտք է դառնայ հա-
յուհի:

Մեղաւոր է արդեօք հայ կի-
նը, — ոչ: Ով է եղել նրա առաջ-
նորդ, — ոչ դք:

Ով որ բարոյական ոյժ ունի,
ով որ հեղինակութիւն ունի, ով
որ վաւրած է արդար, ազգային,
բարոյական գաղափարով, ով որ
սպրում է ի դէպ ուժ, — թող
նա աշխատի բարոյապէս խել
հայ աղջկան և հայ կնոջ իրանց
ջըմանի անսիրտ ներգործութեանց,
փրկել նրանց սպանող անտարբե-
րութեանց և կրկին դարձնել նը-
րանց հայութեանը, տալ այդ ան-
սիրտ էակներին մի գաղափար,
ինչէլ այդ անշունչ էակների մէջ
մի ի դէպ, տալ նրանց կեանքին
մի նպատակ, որից նրանք կատա-
րելապէս զուրկ էին....

Բայց ո՞վ կը յանձն առնի կա-
տարել այդ դժուար գործը: Եւ դ
տեսակ նշոյններն անգամ չեն
երևում:

Հայ կինը եթէ ուզում է կա-
տարելապէս պատկանել հայու-
թեանը, նա պէտք է հրաժարվի
իր շըջանից և կատարելապէս
անձնատուր լինի հայութեանը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԻՆԱ ԱՆԴՐԵԻԿՈՎԱՅԻ ՍՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԸ

Նոյեմբերի 28-ի նստի շարունակութիւնը:
Մեղաւորվածների պաշտպան Ս. Պետր-
բուրգի երդուեալ հաւատարմատար Սպաս-
վէչ սկսում է իր ճառը յիշով յԵՒ. ՄԻ.
ԸՄԼ. 890 յօդուածը, որի զօրութեամբ վե-

րաքննելով վճիռը մեղադրվածի բողոքի հի-
ման վրա, կարելի է թէ պակասեցնել պատ-
ժի չափը և թէ բոլորովն ջնջել կայացած
վճիռը:

Պաշտպանը սկսում է մանրամասնաբար
համեմատել երդուեալների դատարանը պրճու-
նի դատարանի հետ և բացատրում է երկու
տեսակ դատարանների կազմակերպութիւնը և
նրանց պարտաւորութիւնները: Սորանից յետ-
ոյ նա սկսում է քննել թէ ինչ տարբը-
րանքներ կարողանանք գտնել
թեան մէջ պատմական տարրը, այսինքն
փաստեր, իրողութիւններ և լեզնագիտու-
տարրը, այսինքն քննութեան մէջ մասնա-
բնակայական, փաստերի վրա չը հիմնված,
հնարված մասը, որ պէտք է ուշադրութեամբ
մաքրել պատմական մասից: Դատարանից
պահանջվում է, ասում է պաշտպանը, կրթու-
թեան բարձր լինել և ակներե փաստերի վրա
հիմնել իրանց վճիռը: Իրոք թէ Նինա
Անդրեիկովայի խեղդված է և յետոյ ջուրը գը-
ցած է, ընդունելը որ հաւանական պատ-
ճառներ գտնվեցան, ինչ նպատակով Զեմստո-
ւ և Դաբիսովիա նրան սպանեցին, բայց ապա-
ցուցէք որ նրա վզին և կրծքին նրանց
ձեռքը դրվել է, կամ ապացուցէք որ նրանց
մէջ սպանելու համար համաձայնութիւն կա-
յացաւ: Յետոյ պաշտպանը սկսում է ման-
րամասնաբար քննել թէ ինչպէս գտնվեցաւ
Նինա: Անդրեիկովա դիակը և այնտեղից քայլ
առ քայլ հետազոտում է Կուր գետի երկայ-
նութեամբ: դիակի անցած ամբողջ ճանա-
պարհը մինչև այն տեղը, որտեղ գտնվեցան
օրիորդի շորերը: Պաշտպանը դառնալով էկսպ-
երտների քննութեանը ցոյց է տալիս նրանց
արած հետազոտութիւնների մէջ բոլոր հա-
կասութիւնները և կարծում է որ նրանց վը-
ճիւնները կայացան նախընդունված կարծիքի
վրա, թէ Նինա Անդրեիկովայի սպանվեցաւ:
Երևում է որ բժշկները յարմարեցրին իրանց
էկսպերտիզը այն ընդունված մտքին թէ հան-
գուցեալը խեղդված է եղել: Էկսպերտները
այնպէս տարան գործը, որ առաջարկեցին
դատարանին պատրաստ դատավճիռ՝ Նինա
Անդրեիկովայի սպանվեցաւ: Դատարաններն մը-
նում էր միայն ստորագրել վճիռը և թղթի
տակ կնիք դնել: Թիֆլիսի չորս բժշկների մա-
սին պաշտպանը այն կարծիքի է որ նրանք
գուցէ շատ լաւ բժշկում են հիւանդ մար-
դիկներին, բայց մասնագէտներ չեն դատա-
տանական բժշկութեան մէջ, անկարող են
որոշել մեռածի մահվան պատճառը: Սպա-
սովիչ խօսում է էկսպերտիզի վրա առհասա-
րակ, յիշում է դատաստանական բժշկութեան
բազմաթիւ օտարազգի դասադրեր և հեղե-
նակութիւններ և ասում է թէ մեր էկսպերտ-
ները շատ մեծ անհոգութեամբ քննեցին
մարմինը: Ջրի մէջ խեղդվածների բերանից
միշտ գալիս է փրփուր, բայց բժշկները քն-
նեցին մարմինը երեք օր մահից յետոյ երբ
դիակը կատարեալ փտութեան մէջ էր և չը
գտնելով բերանի և շնափողի մէջ փրփուրի
հետքերը, ասում են՝ Նինա Անդրեիկովայի ջրի
մէջ չը խեղդվեցաւ այլ սպանված է եղել:
Նրանք ուշադրութիւն էլ չեն դարձնում ձրկ-
նորսի ցուցման վրա թէ դիակի բերանից, երբ
նա նոր գտնվեցաւ, մի տեսակ փրփուր էր
գալիս: Պաշտպանը հրաւիրում է դատաւո-
րներին հաւատ չընծայել Թիֆլիսի էկսպերտ-
ներին, որոնք անհիմն կերպով գործը քննելուց

յետոյ, հաստատու և ստորագրող լինելու են հետևում և հրապարակու և հաւատարման մասնագետ էկսպերտին, պ. Սորոկինին: Ասում են որ ջրի մէջ խեղդված մարդու դիակը առաջ ջրի տակ է գնում, յետոյ բարձրանում է և ընթանալով ջրի հոսանքով գետի յատակի վրա դիպում է զանազան արգելքներին, և միայն մի քանի ժամանակից յետոյ իր մէջ օդի յայտնի քանակութիւն ընդունելով, բարձրանում է ջրի մակերևոյթը: Նիստ Անդրիկովա կու դիակը կարող էր պաշտպանի կարծիքով ամբողջ ժամանակ ջրի մակերևոյթի վրա մընալ, որովհետև հանգուցեալ գէր աղջկէ էր, իսկ գէր մարդիկ ջրի մէջ աւելի թեթեւ են քան թէ լողանալը, բայց սորանից նրա թռքերի մէջ գտնվեցաւ օդի այնքան մեծ քանակութիւն, որ այդ օդը աւելի էլ պէտք է թեթեւացնէր դիակի ազատ հոսելը ջրի մակերևոյթի վրա: Դիակը չը դիպաւ գետի մէջ պատահող զանազան արգելքներին, մասամբ պաշտպանված լինելով լուացքի միջոցով, որ մարմնի վրա էր մնացել: Անդրիկովայի տանից սկսած մինչև այն տեղը, որտեղ գրանվեցաւ դիակը ոչ թէ 43 վերստ կալ գետի հոսանքով, այլ միայն 33, ինչպէս ապացուցեց էկսպերտ Տկաչով: Պաշտպան մանրա մասնաբար քննում է թէ ինչքան արագութեամբ կարող է մի դիակ անցնել գետի հոսանքով 33 վերստ տարածութիւնը և հասնում է այն եզրակացութեանը որ դիակը Անդրիկովայի տանից մինչև Արայայի կարող էր հասնել 10 ժամում, իսկ յայտնի է որ նա հասաւ 14 ժամում: Նահանգական դատարանում Կոբոպիանով վկայ հաւատացնում էր որ Կուր գետի մի քանի ճիւղաւորութիւնների մէջ ջրի խորութիւնը 4 վերջօրի է հասնում: Ի՞նչ հիման վրա է հաստատում նա այդ: Նա այդ մտաւորապէս է աւելցնում ինչպէս ուրիշ բաներ էլ մտաւորապէս է աւելցնում, ինչպէս հեռաւորութիւնը մինչև Արայայի մտաւորապէս 43 վերստ է կարծում: Եթէ Կուր գետի այն մի ճիւղը 4 վերջօրից աւելի խորութիւն չունի, ինչպէս նախ նախկին քննութեան ժամանակ 9 մարդիկ մի նաւակի մէջ նստած, այն է քննիչը, պրօկուրորը, պ. պ. Բուրակով, Կոբոպիանով, Կամիսեօրովի և Կաւալարների, որոնք միասին երեւի 55 պոստից պրօկուս չեն կշռում, կարողացան անցնել 4 վերջօրի խորութիւն ունեցող ջրի մէջ: Եթէ ճշմարիտ Նիստ սպանվեցաւ անչայտ չարագործների ձեռքով, ինչի պէտք է ընդունել որ նրանք այնքան անմիտ են, որ փոխանակ աւելի մօտիկ դիակը գցելու, նրանք տարան դիակը Թիֆլիսից մօտ քան վերստ հեռաւորութեամբ Ֆայետով և այնտեղ գցեցին: Եւ առհասարակ ի՞նչ հարկաւոր էր դիակը ջուրը գցել: Միթէ նրանք չը գիտէին որ ջրի մէջ խեղդվածներից շատերը այն էլ բողբոջին փորքի գետերում, շատ անգամ բողբոջին չեն դուրս գալիս ջրի երեսը, բողբոջին չեն գտնվում: Միթէ մեղադրվածները չէին կարող օրիորդին խեղդելուց կամ սպանելուց յետոյ, տանել նրա դիակը մի յետնկաձ տեղ և այնտեղ թաղել նրան գետի մէջ, որտեղ ոչ թէ միայն մարդիկ, բայց և թռչունները չէին գտնի նրան: Իսկ եթէ ջուրը գցեցին միթէ չէին մտածի նախ տկտրացնել մարմինը, հասնել նրա վրայից շապիկը և ձեռքերից արծաթեայ բրաւետները և այնպէս ջուրը գցել: Որտեղից Զիստուս կամ Գաբրիելիս պէտք է իմանային որ օրիորդը միշտ շապիկը հագած լողանում է բաղանիքում: այդ բանը կարող էին միայն օրիորդի մայրը ու քոյրը իմանալ:

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ՂԱՐՍԻՑ

30 նոյեմբերի

Այս նամակով հաղորդում եմ խնդրութեանդ մի հետաքրքիր լուր, որից ընթերցողը կարող

է եզրակացնել թէ որքան խաւարեալ, կոյր և յետ են միացած տաճիկները և թէ որքան անհոգ են դէպի յաւաքադիմութեան և լուսաւորութեան գործը: Մինչև այժմ նորա դեռ ևս օրացոյցը գործածել չը գիտեն: Նորա դժուարութեամբ են գտնում իւրեանց պայրամի օրերը: Նորա իւրեանց պայրամի օրերը գտնելու համար առաջուց հետաքրքիր և ուշադիր լինելու են, լուսնի նորոգման օրը գտնելու և տեսնելու համար, այս պատճառով պայրամի օրերում շատ երկամտութիւններ և սխալմունքներ է մտնում մօլաւանցի մէջ: Ոմանք ասում են մենք այսօր տեսնանք լուսնը նորոգված, միւսները թէ երկու օր առաջ արդէն տեսած են, իսկ մի քանիսները պնդում են թէ այս ինչ գիւղի մօլան երեք օր առաջ տեսած է: Իսկ եթէ օրերը ամբողջ լինեն աւելի վատ, այնուհետև դժուար է էջը ցնխից հանել, և այդ պատճառով շատ անգամ և կարելի է ասել որ չէ պատահում որ ամեն տեղի մուսուլմանները մի և նոյն օրում կարողանան պայրամը տօնել: Ղարսից եթէ տօնելու լինի այսօր, տեսնում են, որ նորանից երկու օր յետոյ տօնում են Արդանում, իսկ ցնխի ամսին է սկսել, զօրացին 24-ին: Որովհետև ամեն տեղ ժամանակները որոշվում են իւրեանց մօլաւաների հսկողութեամբ:

Ինձ անձանթ լինելով սոցա այս խաւար ժամանակագրութեան հանգամանքները, պայրամից երեք օր առաջ պատահելով ինձ Ղարսի երեւելի մօլաներից մինը հարցրի նորան արդեօք որ օրն է իւրեանց դուրպան պայրամը: Յարգելի մօլան կանց առաւ և դժուարանալով ասաց, «Այա, չիտակն ասեմ դեռ յայտնի չէ, այսօր այդ մասին ժողով լինելու է և տեղեկութիւններ հաւաքելու ենք, տեսնենք երբ և որ օրը լինելու է, ամա իմ կարծիքով սորանից 7 օր յետոյ լինելու է»:

Յետեւալ օրը Ղարսի մօլանները չվարած էին և ազատվելու համար, հասարակութեան էին դիմել: Ղարսի մէջ մուսուլման էին կանչում, տաճիկի մինը բղաւում էր փողոցների և շուկայի մէջ (մուսուլմաններ, ով որ ձեզանից տեսել է լուսնի նորոգման առաջին օրը թող գնաց մալիկեան մկայութիւն տալու):

Մօլանները հաւաքելով վկաները, նրանց ցուցման հիման վրա, միւսեցին տօնել դուրպան պայրամին ամսին 23-ին: Նոյեմբերի 22 երեկոյին հինգ թիղանթների որոտումը աւետեց մուսուլմաններին նոցա պայրամի սկսվելը: Հետեւեալ առաւօտեան Ղարսի փողոցները ներկված էր զօհերի արիւնով: Իւրաքանչիւր տունը զօհում է առանց բացառութեան, շատերը հաւուսներէից 10 ոչխարից աւելի են մորթում, իւրաքանչիւր իր սիրելի ննջեցեալների ամեն մինը համար պարտաւոր է զօհել, որպէս զի դատաստանի օրը ամենը իւր զօհերի վրա նստած անցիկներն դժբաքի վրայի կատարվից, վայ չունեցողին:

Ամսին 24-ին գիշերը քաղաքի ծայրում գրանված ջրաղացի ջրի մէջ խեղդված գտնվեցաւ տեղիս բնակիչներից մի կռչկալար, որը երեւի կոյտանը հարած լինելով ընկել է քաղաքի շուրջը գտնված կանաչի, ջրանցքի մէջ և չը կարողանալով ելանել խեղդվել է: Այդ կանաչները խորը և վրան չը ծածկված լինելով կարող են շատ աղքատի մարդկերանց դժբաղդութեան պատճառ լինել: Հրապարակ ենք ու խնդրում պօլիցիայի ուշադրութիւնը դրա վրա: Խեղճ պօլիցիան էլ որ մէկն անէ, երկու տարի է արդէն չէ կարողանում քաղաքի անմաքրութեանը մի ծար անել ամեն տեղ ապակահոսութիւն է: Կանաչանցների վրա անհոգ դուրսնից, բոլոր երիտասարդները վարակված են սիֆիլիսովախան արտով:

Ուրախութեամբ լսում ենք որ չուտով բացվելու է հիւանդանոցը:

Ղարսի գաւառական վարչութիւնը փոխվեցաւ և գաւառական գլխավորը անուանվեցաւ զինուորական նահանգապետ:

Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԻՐ

Ուսու լրագիրներում կարգում ենք ԲՕՍՏՕԿ (Դօնի վրա) քաղաքից հաղորդած լուրը որ նոյեմբերի 30-ին Բօստով-Ղարսիկալիստեան երկաթուղու կազմիցի և Բատայի կայարանի մէջ երկաթուղու գնացքը բէլաներից թռուս Ազատվեցաւ միայն փոստային վագօնը:

մի պանօրամա: Մուտքը արժէ 30 կօպէկ, Ամբողջ օրը շինութիւնը լի է այցելուներով: Թիֆլիսցիներն նախապատու է վճարել 30 կօպէկ և տեսնել այդ տեսակ մի պանօրամայի անհամ պատկերները, քան թէ վճարել 50 կօպէկ կամ մի րոպէ և այցելել պ. Միրզօեվի հարուստ գեղարուեստական թանգարանը, որ գտնվում է Շիօեվի տանը:

Մեզ հաղորդում են, որ Լուսու գաւառի ԱՐԻՈՒՆԻ գիւղի քահանայն մի տօն օր զգեստաւորված կանգնում է ժողովուրդի առաջ և դիմում է նրանց հետեւել խօսքերով: «Իրեւելի ժողովուրդ, բնիկը ամեն միւս մի մի բնաւ տաք ոչ պըտարաքը սկսել չըմ, ես խօս ձեզ պըտաւանը դործնական քարոզներ չեն կարգում: Սրանից աւելի գործնական ինչ պէտք է լինի:

Ստացանք ԱՍԱՅԻՍԱՅԻՑ յօգուտ «Արարատեան ընկերութեան» 9 ր.: Նուիրատուները հետեւալ անձինք են. պ. պ. Միրզօեվ ձարակեանց 5 ր., Առաքել Մեղքսեանց 3 ր., և Սարգիս Միսասեանց 1 ր.: Այդ փողերը հաւաքել է պ. Մ. Կալիսեանց:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍԻՍԻՐԻՆ

ԽՈՐԷՆ ՆԱՐԲԵՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՃԱՌԸ

Ես որ պատիւ ունեցայ սրբազան պաշտօնակցին հետ ի մօտոյ արքեպիսկոպոսի զհիշները յաճի, զննել կարծիքները, ըմբռնել դիտաւորութիւնները, և Պերլինի Վեհաժողովոյն մերձնալով շօշափել իմն այն հոյակապ դիւանադիտաց՝ որոց ձեռքն էր աշխարհի բաղդը՝ արեւելեան աշխարհի վրայ ունեցած արամադրութիւնը և դադափարները, կը հաւատարմացնեմ զձեզ, Տեառք երեսփոխանը, որ այն պարագայից մէջ յորում դուանրեցաւ Վեհաժողովը և այն նպատակին առջև զոր ինչ իւր անձին դրած էր, — Եւրոպայի խաղաղութիւնը և երկու մեծ ինքնակալութեանց ներդաշնակութեան հաստատութիւնը, — այս պարագայից մէջ, կըսեմ, զկարելի չէր ընդունել աւելի քան զոր ընդունեցանք:

Հայոց պատգամաւորութիւնը չէր կրնար դէպքերը յեղաշնչել, չէր կրնար փոփոխել իրաց հանգամանքները, ինչպէս չը կրցին փոփոխել նոյն իսկ զօրաւոր պետութեանց դեպքերը և դիւանադեք այն Արիսպագոսին մէջ:

Բայց և այնպէս առաջին անգամ ըլլալով Հայուն անունը լոկ կրօնական կերպարանը մերկանալով՝ քաղաքական կերպարանը մը կանոն, և միջազգային մեծ դաշնադրի մը մէջ միջոգապիս խնդիր մը կը դառնայ Հայկական խնդիրը:

Փորձառու և ներհուն կենցաղագիտութիւնը պէտք է խոստովանի որ անպատրաստ ազգ մը որ իւր առաջին քայլն ըրած է այսչափ միայն կարելի էր շահիլ, և շահեցաւ:

Այո, Տեառք, այս անգամ սերմը սերմանեցինք, տունկ մըն է զոր ձեռք բերինք: Դիտե՛ք բնութեան օրէնքը, կարելի չէ այսօր սերմանել և այսօր բաղձալի հունձը վայելի: Եթէ կուզենք որ տունկը ի ծառ փոխուի, ծաղիկ ու պտուղ արդիւնաբերէ՝ մը շալկմը դայի, օգնեմք ժամանակին, և ապահով ըլլանք որ օր մը պիտի վայելմը մեր աշխատանաց արդաւաքը: Բայց յիշմը միանգամայն՝ որ ամենեւ գեղեցիկ և յուսալեց ծաղիկը՝ կը խամրի, կը չորնայ անհոգ և տղէտ մշակին ձեռքը:

Մեծադոյն կենցաղագիտութիւնը՝ ժամանակին հանդամանքները ճանաչելն է, և դէպքերէն օգուտ քաղելով՝ ոտն առ ոտն յառաջ ընթանալն է: Այն ազգը միայն կը վերականգնի՝ որ դիտէ թէ պէտք է խորհի շարժի, և դործէ աննրկուն յարատեւութեամբ դիմելով դէպի նպատակն առաջադրելու:

Մեր Հայ եղբարք՝ որ այլուր, որք ի հե-

ռուստ առաւել հանդարտ ողով, առաւել շրջապայցութեամբ դիտեցին իրաց ընթացքը, ուրախ եղան ձեռք բերուած արդիւնքին վրայ, և խնդրեցին որ իւրեանց խնդակցութիւնը ներկայացնեմ ի Ձերոյ ատեն: Կարելի էր որ նորա, կարելի էր որ ես՝ յուսալիք թէ այս ատենին մէջ այսչափ ամիսներ զոհուին դժգոհութեան, անվստահութեան, անգործութեան...:

Ինչ մեծ անկալութիւններով վերադարձայ ես ի հայրենիս և ի՞նչ գտայ, աւա՜ղ: Ես կարծէի թէ իմաստուն ժողովը պարագայից բռնութեան առջև իւր բոլոր ոյժն և ուշը ժողովելով, արդէն պատրաստած է իւր ապագային ծրագրերը, և անոր գործադրութեանը կը զօհէ իւր անգին ժամերը: Ես կարծէի թէ գոնէ այսօր զգացած է Ազգային ժողովը իւր նուիրական պարտքը և Սահմանադրութեան պտուղը պիտի ըսկի վայելել տալ Ազգին:

Երբ առաջին քաղաքագէտ և յառաջորդեմ Եւրոպայի կը պարծեր ձեր պատգամաւորը թէ Հայոց ազգը իւր քսան տարի է ի վեր Սահմանադրական ազգ մըն է, և Արեւմտեան ազգաց զարմանքը կը շարժէր, հնրէ է ես խոստովանեմ ձեր ատենով թէ այս չափ ժամանակ դեռ բաւական չեղաւ զմեզ Սահմանադրական ընկու և Սահմանադրութեան արժանի գործեր գործելու:

Ի՞նչ օգուտ մեզի օրինաց գեղեցիկ դրութիւնը երբ չը գիտնամք անոր օգուտն և շահը:

Ուր է ժողովոյ կենսականութեան նշանը, ամուլ վեճարանութիւնը են դորա յարացոյց: Իրերամարտ միջոգնեցն են դորա փաստը:

Ազգ մը իւր ձեռքովն է որ կը դարձնէ իւր ճակատագիրը: Ազգը մէք կը ներկայացնեմք այսօր, Տեառք Նրեսիփոխանը, որովհետև մեզ հաւատացած է նա իւր ճակատագիրը: Այս դժբաղդ աղբին յոյսերը ի դերն չը հասնեմք: Եթէ ինչ մեծ պատմականաւորութիւն ստացած եմք այն օրէն յորում իւրաքանչիւր ոք ի մէջ այս ժողովոյ սրբապայրին սեմերէն ներս մտաւ, իւր հիտը բերելով ազգին պատգամը, ազգին ցաւերը, աղբին անկալութիւնը: Քանի նիստ կրնամք համարել այնքան բազմաթիւ նիստերուն մէջ յորում ներքին խայտանօք մեր խեղճ վկայած ըլլայ թէ ազգային և լրեսիփոխանի պարտականութիւններս կատարած եմք անթերի, և ազգային մեծ և օգտաւոր խնդիր մը լուծած եմք:

Ազգային ժողովը յո պարտքն է աւազ աւելցնել և տեսնել ժամանակը և նկատելով որ յղն է նա՝ առ այն շարժել և պատրաստել գէշալութիւն: Ձեր պարտքն է, Տեառք Նրեսիփոխանը, Ազգիս համար կենսական եղած խնդիրները առնուլ ի ձեռի, զանոնք նըշանակել ձեր օրակարգին մէջ, անոնցմով զբաղել, զանոնք իմաստասիրել ուշով շրջապայցողութեամբ, և զանոնք վճռել որչափ որ կարելի է շուտով, վասն զի ժամանակը արագաստ էր զլրի, և կը մղէ դէպքերը շուրջ և երեքտորութեան հսկայաշարժ թեւերով:

Եւ որո՞նք են այն կենսական խնդիրները, Տեառք Նրեսիփոխանը: Արդէն գիտե՛ք զայդ բայց պարտք կը համարեմ և ես յիշատակել:

Ազգի մը վերաշնորհեան հիմունքը երեք կէտերու մէջն են.

Ա. Մտաւորական զարգացում.

Բ. Նիւթական բարգաւաճում.

Գ. Կրթական ընթացք.

Այս վերջին կէտին վրայ կըսեմ: Զը կայ մէջերէն մէկը՝ որ ինձ հետ համամիտ չը գտնուի թէ այն իմաստուն և ազգասէր Պատրիարքը որ այս դժուարին պարագայից մէջ եցոյց այնքան արիւթիւն և քաղաքագիտու-

Թիւն, հարկ է որ շարունակե՛ ազգային նա-
ւուն դեկապարտութիւնը: Առ այս պէտք է
ժողովը կրնէ իւր վստահութիւնը, և ապա-
հով ըլլայ թէ նա զնաւն յանդիման նաւա-
հանգիստ պիտի առաջնորդէ: Պէտք է ժո-
ղովը տայ միանգամ Ս. Պատրիարք Հօր այն
շարժման ազատութիւնը, առանց որոյ կա-
րելի չէ չը մասնել ի դերն ազգային կարեւո-
րագոյն շահերը, ինչպէս փորձով տեսած են
այն ամէն յառաջագնաց ազգերը որ Սահմա-
նադրութեան մէջ մեզ պէտք է օրինակ հան-
դիսանան:

Իսկ առջի երկու կէտերը՝ որ են ՎՊատրի-
արական դարգացումն, և ճիւղաւորական բար-
դաւաճումն, ազգային ամեն անհատի՝ ևս
առաւել կարողութիւն սրբազան պարտքն է
իրենց գործունէութիւնը, եռանդը և կարող-
ութիւնը նուիրել առ այն, եթէ կուզեն
ազգին կենդանութիւնը տեսնել:

Աւր երկու չափ պէտք է այս երկու խնդ-
րիներով զբաղել, և առ այն դարձնել իւր
միտքն և ջանքը: Ի՞նչ ըստ մեզ ազգային ժողո-
վոյ համար, որոյ ամենէն նուիրական պարտ-
քն է սոյն կենաց և մահու խնդիրները
քննել և լուծել, և զապագայն պատրաս-
տել:

Այո, անհատական ջանքերը մեր ազգին
արդի վիճակին մէջ պէտք է իշխանութիւնը
կանոնաւորէ, ցուցանելով այն շրջանակը
ուր պէտք է շարժին, այն սղորդութիւնն՝ որ
պէտք է ունենան, և այն նպատակը՝ յոր
պէտք է ընթանան:

Աւրեմ իմաստաստի ժողովը իւր ամենէն
մեծ գրազմուծն համարելու է մտածել
որոշել սոյն խնդիրները, և զորացնել զկեր-
րոնական վարչութիւն, որ կարենայ ձեռն
և գործունէութեան միջոցներով անցնալ
աւել նպատակաւ կերպով կատարել իւր
սոյն մեծ պարտականութիւնը: Վասն զի մեր
ներքին քաղաքականութիւնը պէտք է հայ-
թայթէ մեր վերածնութեան անմիջական
պիտոյքը: Կը համարձակիմ ըսելու որ ժո-
ղովս բաւական շատ աւել զբաղեցաւ
ընդհանուր քաղաքականութեան յեղյոյնով
հորիզոնին հետ: Պէտք է նա իւր բոլոր ու-
շադրութիւնը կեդրոնացնէ, — վասն զի և այդ
իսկ է իւրն պաշտօն, — իւր ներքին աշխա-
տութեան վրայ: Ընդհանուր քաղաքականու-
թիւնը, պարագայից բերմունքը՝ ժամանակին
կուգան բերել իրենց օժանդակութիւնը, ու
փորձով իսկ տեսնել որ եթէ այդ վայրկեանը
հասնի թէ ժողովը մէջ, և թէ արտաքոյ
Ազգին ձեռնադրելին վրայ լուրջ խորհուր-
քն չեն պակսիր բարեբաղդաբար որ անկէ
գիտանան օգտեցնել զԱզգը: Մեր ներքին քա-
ղաքականութիւնն ըլլայ մեր մատարական և
նիւթական բարդաւաճումը:

Տեսնել երեսփոխանք, մեր անվստահու-
թեան, մեր ձեռնադրական վստահութեան
տխուր հետեւանքները կրեցիք ցարգ: Բա-
ւական է ինչ որ առկէ ազգը: Բրեկական
յանցանք է այսուհետեւ մեր չը գործելը:
Պատմութեան առջև պատասխանատուու-
թիւնն այնչափ առաւել ծանր պիտի ըլլայ
որչափ առաւել ժամանակին նշանակութիւնը
և ընձեռած օգուտն չը հասկնամք, և չը
փութամք շահուիլ իրաց նպատակաւ հան-
գումանքներէն: Ձայն ըրին և կրնեն նոյն իսկ
մեր շրջակայ ազգաց իմաստասէրները: Չայս
պարտական եմք ընել և մեք:

Այն ատեն, և այն ատեն միայն կը լու-
ծուի Հայկական խնդիրը:

Կը խնդրեմ ի Բարձրդոյն՝ որ մեր նախ-
նաց ազգանուէր ոգին ներշնչէ ի մեզ, ա-
նոնց՝ որ մեզ չափ ծանր պարագայներու
մէջ գտնուեցան, բայց զիտցան ազգին կեն-
դանութեան նուիրել իրենց բոլանդակ ուժն,
սիրտը, արիւնը:

Նոյն սիրտը, նոյն եռանդուն գործունէու-
թիւնը նուիրեմք և մեք Հայրենաց, և Աս-

տուած օրհնէ մեր ջանքն և արդիւնաւորէ
մեր ազգանուէր աշխատութիւնները ի ներ-
կայն և յապագային:

Տեսնել երեսփոխանք, կեդրականում առա-
ջարկելով, նախ՝ «Բարդաքական կէտը» յանձ-
նել Ամեն. Ս. Պատրիարք Հօր որ սկսած ըն-
թացքը յառաջ վարէ, վայելելով մեր կատա-
րեալ վստահութիւնը: Բ. Նորոգ եռանդեամբ
զբաղել այսուհետեւ մեր երեսփոխանական
պաշտօնին գործարարութեանը, մեր օրակար-
գին գլուխ գնելով սոյն երկու կենսաւէտ խնդ-
րիները: ՎՊատրիարքան զարգացումն և
ճիւղաւորական բարդաւաճումն Ազգին Հայոց:

Տեսնել երեսփոխանք, ձեր ձեռք է Հայոց
ազգին կենդան և մահը: — Ընտրեցէք:

(Հայրենիք)

ՅԲԱՆՍԻԱ

Փարիզից հաղորդում են նոյնմբերի 29-ին
լրագիրներին թէ երէկ երեկոյ մի ժողով
կայացաւ Ահմադիւմ պ. Գրէվի մօտ:

Պ. Գրէվին հրահրել էր բոնապարտիստնե-
րին: Նախագահի զահլիճը առհասարակ մի
այնպիսի տեղ է, ուր ամեն գաղափարի մար-
դիկ անխորհրդ կարող են միմեանց պատահել.
և այս զիպաւածով էր Գրէվին այն առաւել-
ութիւնն ունի, որ բոնապարտիստները, որոնց
համար սուրբ չէր չը կայ, այնու ամենայնիւ
յարգելով են նոյնում իրաւ վրա:

Իստակութեան նիւթը գլխաւորապէս գե-
ղարուեստից բխող էր վրա էր, և այդ ոչ
թէ նրա համար որ ձեռնարկա ծրարիւն հա-
սել է այն իրեցական կէտին, ուր հանձնար-
ները զբաղվում են միայն կրտսերական հա-
կաճութիւններով, ուր Գրէվին անհիշատակ
իւրաքանչիւրն էլ իրանց կուսակցներն
ունեն, և ուր ոչ Արիստո Լիւգոն, ոչ Էնգըր
և ոչ էլ Գրէվինն ոչ մի նշանակութիւն
չեն տալի այս երկար հակառակութիւններին.
այլ միայն նրա համար, որ բոնապարտիստնե-
րը այդպէս օտարիկ հարուած տալով պ. Գա-
լանիէին կտորեն բոլորովն պ. Բարդուի
նշանակութիւնը:

Այդ ժողովն մի քանի հռետորներ ձեռնը
բացարձակապէս յայտնում էին, որ այդ է ե-
ղել միշտ զբանց գիտաւորութիւնը:

Այն նշանաւոր հարցովորները, որ պէտք է
լինէին սենատում, յետագայից մինչև
բիւրջէի հարցի օրը: Այդ չը գիտէ թէ
պ. Գրէվին կը յաջողացնէ արդեօք այդ հար-
ցովորները յայտ յանդիման սենատի մէջ
անել տալ, թէ նա կը բաւականանայ միայն
Լաբրիի ձեռնով: Այնու ամենայնիւ միևնու-
րութեան դէմ այս սպառնալիքները բնաւ չեն
վարեցնում միևնուրութեանը:

Նիւրշաթի օրը սենատը կը զբաղվի
բիւրջէի հարցով: Ինչպէս երևում է վիճա-
բանութիւնները կը սկսին այդ օրից և կը
վերջանան հինգշաբթի օրը:

Կիրակի օրը Էլիսեն դաշտերի ցիրկում
պ. Էլիսեն Լաբրիին ազատ փոխանակու-
թեան մասին որ ձառ կը կրեցայ: Այդպէս
լինելու ժողովին կը նախադասէ պ. Լաբրիին:
Այս ժողովին կը մասնակցեն վաճառականական
ազատութեան պաշտպան պ. Միշել Երվա-
լիէն, Լաբրիէն, Ժիւլ Սիմօնը, և պ. Ելշտալը:

Միւսը Մարտից հետադրում են «Temps»
լրագիրն, որ Լանդի հանրապետական սենատո-
րական պատգամաւորներն պ. պ. Արիստ Լա-
բրիին պատգամաւորներին պ. պ. Արիստ Լա-
բրիին, որ ազգային ժողովին նախկին
անդամ էր և Թիէրի ժամանակ էլ միևնուրութե-
ան պաշտօն էր վարում, և Բուկոնը, որ
արդէն 1876 թւի յունվարի 30-ին սենատո-
րական ընտրութիւնների ժամանակ անդամ
էր ընտրված:

Մի քանի լրագիրներ, առում է մի և նոյն
լրագիրը, սխալմամբ հրատարակել են որ իւր
թէ տիկին Թիէրը և օրիորդ Դոնը գնացել են
Փարիզից:

Տիկին Թիէրը միայն ամեն վերջին կը գը-
նայ իւր քրոջ հետ Բիարից:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՍԻՅԻՑ

Կ. Պոլսի 20 նոյեմբ.

Ներ ազգային նոր վարչութիւնը ընտրուեցաւ
կը յուսայինք թէ եռանդեամբ պիտի աշխատին,
բայց կը տեսնեմք որ շատ անգամ շաբաթն մի
անգամ իսկ ժողովը չեն կրնար գումարել մեծա-
մասնութիւն չը գոյանալուն պատճառաւ: Ի՞նչ

ընէ պատրիարքն միայնակ երբ իրեն աջակից-
ներն թոյլ կը շարժին:

Չէթունի խնդիրն գրաւած է մեր մտքերն.
սակայն պատրիարքարանը տեղեկութիւն մը չը հա-
ղորդէր, բայց գիտեմք որ պատրիարքն այս նիւ-
թին վրա դեպքանց կարող գրեք գրած է. նո-
յնմ. 16-ին երեկոյն ուշ ատեն պ. Ֆուադիէ,
Ֆրանսայի գեղարար, պատրիարքարանը գալով ս.
պատրիարքի հետ երկար տեսակցութիւն մը ու-
նեցաւ Չէթունի խնդրին նկատմամբ: Այս ա-
ւուր հայ թերթէ մը հետեւալ տեղեկութիւններն
կը քաղեմք. «Նոյեմբ. 29-ի օրն Մարաշի քը-
րիստոնեայ ժողովրդին համար սոյն և արտա-
սուտ օր մը եղաւ: Նոյն օրն երեկոյն ուշ ատեն
Ախոր լուսնիքն զինուորական փողի շարքին
լուսեցաւ. ժողովուրդը կը դիմէ կառավարու-
թեան պալատն իմանալու թէ ինչ կայ, և ահա
երկու գունդ զինեալ թիւրք զօրականներ կերե-
ւին և նոցա մէջէն երկայնահասակ, ձորմակ մո-
րուքով եպիսկոպոս մը, ձիու վրա նստած, այդ
եպիսկոպոսն փութուցնել վանուց առաջնորդ Նի-
կողոս եպիսկոպոսն է. եպիսկոպոսին ետեւէն 120
զէյթունցիներ կուգային: Յիշեալ կործ հայերն
կը մտցնէն կառավարութեան պալատը և բակը
կը կայնեցնէն, յետոյ նոցա կէսն զինուորականն
և ի բանտ կը խրկեն: Կը մերկացնեն եպիսկո-
պոսն ալ իւր ըզգեստներէն, լոկ շապիկ մը և
շապկներն մը կը թողուն վրան և շղթայակապ
կը խրկեն ի բանտ»:

«Ահաւասիկ ինչ օր կը պատմեն կառավարու-
թեան պալատը այս դէպքին վրա, հոկտեմ. 26-ին
Չօլաք Արթին վարժապետն խումբ մը հայոց հետ
կանուխ թիւրք զօրաց վրա յարձակելու կը պատ-
րաստուի. Մարաշի կառավարիչ Վէյսի-փաշա
նախորդ օրէն այս եղելութիւնը իմացած ըլլա-
լով քանի մը գունդեր կը խրկէ հայոց վրա. հայք
իրենց հրացաններն կը պարպեն զօրաց վրա.
զօրապետը կը հրամայէ հայոց անձնատուր լինիլ,
հայերն կը դիմարեն, պատերազմը կսկսի: Չէթ-
ունցն մի քանի ժամ հեռու Միքայէլ գիւղի
հայք կը պաշարուին, և թշնամեաց ստուար թը-
ւոյն չը կարենալով դիմարել կը ձերբակալուին:
Այսօր Մարաշու բանտերու մէջ 200 կործ զէյ-
թունցի հայեր շղթայակապ են, սոցա մէջն են
Թուրքուտ առաջնորդ Նիկողոս եպիսկոպոսն և
Արթին վարժապետն»:

Մեր թերթերն ուրիշ տեղեկութիւններ չեն
տար. կը զարմանամք որ հոկտեմբերի 26-ին ե-
ղած այսպիսի կարեւոր դէպք մը հազիւ նոյնմ.
16-ին պատրիարքարանը կիմացուի: Առ այժմ
այսչափ:

Ահաւասիկ նոր օրինակ մը թէ կառավարու-
թիւնը ինչպէս կըմընէ բարեկարգութեանց
գործադրութիւնը: Տէրախի քիւրդերն զսպելու
սահմանված բանակի հրամանատարն կը յանձ-
նարարէ Բալուի կառավարին պատրաստել բա-
նակի ուսուցիչն և զգեստներն: Կառավարիչը կը
հրամայէ որ միայն հայ գիւղացիներն հոգան
այդ ծանր պիտոյքներն: Բալուի առաջնորդա-
կան տեղագահ Պողոս վարդապետ կը բողոքէ
այս անիրաւութեան դէմ, անիրաւութիւն մը
որ հայ գիւղացւոց մեծամեծ վնասներ պիտի
պատճառէ, և կը պահանջէ որ տաճիկ և քիւրդ
գիւղերն ալ մասնակցեն բանակին այս պէտ-
քերն հոգալու: Պողոս վարդապետ իմանալով որ
այս մտքով Ծաղկապ հայ գիւղի մէջ կառավա-
րութիւնը ցորենի ամբար հաստատուելու վրա է
գիւղացւոց կը գրէ որ այսպիսի անիրաւ որո-
շում մը չընդունեն և դիմարեն: Հայ գիւղացի-
ներն սիրով կը հնազանդին վարդապետին և
տաճիկ կառավարի հրամանը չեն կատարէր:
Կառավարիչը այդ գիրն կը տեսնէ, մատնիչ
հայտ մը, Կարապետ Տէր Աստուածատուրեանի
չնորհի և կը հրամայէ ձերբակալել վարդապե-
տը, տեղուի երեկոյ հայերն կը միջամտեն և թոյլ
չեն տար. սակայն կառավարիչը կը գրէ Պոլս
կառավարութեան որ այդ վարդապետն հե-
ռացնեն անտի. տեսնեմք ինչ պիտի ընէ պատ-
րիարքարանը այս արեւսիրտ վարդապետին հա-
մար: Կը յուսամք թէ այսպիսի առաջնորդներ
պատրիարքարանը կաշխատի իրենց տեղն ան-
սասան պահել: Մի քանի տարի առաջ դարձեալ
Բալուի մէջ առաջնորդ Մարգիս վարդապետն
ժողովուրդի շահերն քաշուցնելով պաշտպանե-
լուն համար կառավարութիւնը զինքն մերկ ձիու
վրա նստեցնելով մահապարտներու հետ միասին
մինչև Տիգրանակերտ քաղաք և անտի Պոլս բերել
ունէր: Եւ ուրեմն յաջողեցաւ Մարգիս վարդապե-
տն հեռացնել իւր առաջնորդութեան քաղա-
քէն, ժողովուրդի շահերն պաշտպանող առաջ-
նորդներն ախորժելի չեն կառավարութեան:
Իտալիոյ թագաւորի անձին դէմ եղած սպան-

ման փորձն անյաջող ելլելուն առթիւ ս. պատ-
րիարքը խնդակցութեան դիր գրեց Իտալիոյ դես-
պանին:

Հայկակ

ՆԱՄԱԿ ԹԻՐԻՍԻՅԻՆ

Կ. Պոլսի 11 նոյեմբ.

Մայրաքաղաքին հայ թերթերէն իմացած էք
անտարակոյս թէ «Կարդցասիրաց — Արեւելեան» ըն-
կերութիւն մը Հայաստանի մէջ ազգային կըր-
թութեան նպաստելու նպատակաւ Պոլսոյ մէջ
ի վաղուց հիմնեալ լինելով Մայր մէջ վարժա-
բան մը բանալու համար ճառքայ հանած է զՊ.
Փիլիպպոս Երեցեան: Այս ընկերութիւնը իւր
ազդեցուտ նպատակն իրացնելու համար, չը կըր-
նար բնականաբար իրեն աջակցութեան հրաւի-
րել թիւրքիոյ հայերը միայն, այլ նաև ամեն կողմ
բնակող բարեխնայ ազգայինները, ըստ որում
ազգային վերահիւսթիւնը ամեն հայու սըր-
բազան պարտք մ'է: Որոնք որ լաւ կըմընեն
այս պարտքը, քաջ կը տեսնեն անոնք թէ գործ-
նական հայրենասիրութեան առաջին պահանջն
է ձեռք և քրտինք թափել միայն այն դաշտաց
վրա, ուր ազգին դարաւոր իրաւունքները կան և
կը կենան, աջակից ըլլալ այն ընկերութիւննե-
րուն որը համոզուած լինելով թէ Հայաստանի
սահմանէն դուրս հայ ազգութեան վերականգ-
նում չը կայ հայրենիքի մէջ բնակող ազգայնոց
կրթութեան կը հետամտին: Մեծ բերկրութեամբ
կը տեսնենք թէ Պոլսոյ մէջ, հայաստանցի իւր
դատարարական խնդրոյն համար քիչ համա-
կրանք չը գտնէր. ինչպէս Թուրքիոյ նոյնպէս Ռու-
սիոյ հայերէն այս նկատմամբ, մեծ անկալութիւն-
ներ ունենալու իրաւունք ունի, և թերեւ թէ,
հաճկաստանի վրայ պատերազմին բերած, աղէ-
տալի վիճակին պատճառաւ, Կովկասի հայերն
իրենց Հայաստանի եղբայր քան զայս աւել
օգնականութեան յոյսեր չունեն: Արդէն իսկ ի-
րենց այս քաղցր յոյսերուն մէջ, ուրախութիւն
կը տեսնենք որ կարդարանան: «Արարտեան
ընկերութիւնն» որ «Կարդցասիրաց — Արեւելեան»
պէս Հայաստանի մէջ ուսում ծաւալելու կաշ-
խատի, իր ազնիւ նպատակին համար Կովկասի
մէջ քաջակրթութիւն գտնելի չը պակսիր: Առա-
ջինը վստահութեան յոյսեր չունեն: Արդէն իսկ ի-
րարմէ ոչ ընդհատ բարիքներ պիտի արտադ-
րեն, եթէ մի և նոյն յարաւորութեամբ իրենց
վերկարար գործը շարունակեն, եթէ իրենց գոր-
ծունէութիւնը Ազգին կողմէն քաջակրթութեամբ
վաւ պահուի:

Ռուսիոյ մէջ գուցէ անծանօթ մնացած ըլլայ
մինչև այսօր «Կարդցասիրաց — Արեւելեան» գոյու-
թիւնը, կը խնդրենք, խմբագիր-տէր, որ զայն
ձեր ազգանէր թերթին միջոցաւ ծանոթացնէք:
«Կարդցասիրաց — Արեւելեան» երկու նախկին ըն-
կերութեանց միացումն է, որոց առաջինն 1870
և երկրորդը 1876-ին հիմնուած է: Միացան ըստ
որում մի և նոյն նպատակի կը ծառայէին և ի-
րենց արդիւնքը միացնելի ետև, ընտրեցին ի-
րենց գործառնութեանց դաշտը Տարսիս գաւա-
ռը: Ամեն հեռաւոր հայու ուշադրութեան չը
կրնար վրիպիլ այս աշխարհին կարեւորութիւնը:
Մեր ազգութեան բուն իսկ որրանք ըլլալով և
իւր սահմանաց մէջ միւս գաւառներէ աւելի հա-
յաղիկ պարունակելով (148,000) որը ծառայէին և ի-
րարաւ կը վայելեն, տարակոյս չը կայ թէ,
այդ աշխարհը կրթութեամբ հայ ազգայնութեան
ամենավաւ և ամենապղծելի վաւարան մը պիտի
ըլլայ: Այս նախատեսութեամբ Մայր մէջ կը հի-
մնէ վարժարան մը, որուն առաջին տարւոյ ըն-
թացքը արդէն ապահովաւ է, ընկերութեան
Պոլսոյ մէջ ունեցած 400 անդամաց և դրամադ-
լին հայթաթած հասոյթներով: Հարկ չէ յաւել-
լու թէ ընկերութիւնն իր նպատակն աւելի ըն-
դարձակ կերպիւ գործադրելու համար, ընդհանուր
աղբիւն ձեռնադրութեան կը կարօտի: Այս խորհր-
դով, ամեն հայու հրաւէր կարողացած միջոցին քաջ
համոզուած է թէ ամեն կողմէ նպատակ պիտի
ընդունի, նա մասնաւոր Ռուսիոյ հայերէն Եւ-
դուր, խմբագիր-տէր, որ ձեր թերթիւն այս հրաւէրը
դուր, խմբագիր-տէր, որ ձեր թերթիւն այս հրաւէրը
կրնա շատ տեղ հասցնել կը խնդրեմք որ զայն
արդիւնաւորելու համար, ձեր գրասենեկին մէջ
հանգանակութիւն մը բանալ բարեհաճեմք: Հա-
ւաստի ենք որ ձեր ընթերցողներն ի սէր իրենց
Տարսիս եղբայր, որ բերւ աղէտից մէջ կը տա-
ռապին պիտի սիրով փութան իրենց հանգանա-
կին առձեռն ուղղել:

(Ստորագրութիւններ)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՔԱՐԱՆՈՒԻ „ՌՈՒՍԱՏԱՆՆԻ“ ՀԱՆՈՏԻ

(ՀԱՆՔԻԹ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ԶԷԼՈՐԱՆԻ ԱՐՈՒԱՐՁԱՆԻ ԿՈՐՄԵՏԱ

ԳԻՒԼՈՒՄ

ԸՆԿ. ՆԵՅՄԵՆ—ՀԵՆՏԵՐ

Փակվում է ՇԵՆՏԵՐԻ ՊԱՎԼՈՒՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄՈՂԶ ՎԱԳՈՆՆԵՐՈՎ ԵՐԿԱՐՈՒԼՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՈՒ, ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔԱՂԱԳԻ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՆՆՍԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՈՒԿՈՎ:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է ի գիտություն ամենքի թիֆլիսի բաղադրյալի Դուռայի 1879-1882 թիվը ձայնաւորներ ընտրելու համար կանոններ, որ հաստատված են Դուռայից 1872 թիվ հոկտեմբերի 16-ին

§ 1. Ընտրությունների ժամանակամիջոցից մէկ շաբաթ առաջ իւրաքանչիւր կարգի ընտրողներին առանձնապէս իմաց են տրվում ընտրությունների անոյը, որը և թիւը յայտարարությունների միջոցով, որոնք կը տպվեն բոլոր անգլիական լրագրողներում, և նոյնպէս բաղադրյալ զանազան մասերում առաջ հայտը և վրայ եղունքով յայտարարություններ կայանալով և ուղարկելով այդ յայտարարությունները Ստրանցի վարչությունները:

§ 2. Նստին եկող ընտրողները ժողովի ղաջիժի մուտքի առաջ նշանակվում են ցուցակի մէջ գտու կարգով իւրաքանչիւրի ազգանունի առաջ նշանակվով ձայնների թիւը և յետոյ ստանում են թէ ղաջիժի մուտքի տուն սակը և թէ մէկ տպագրված բանկ կանդիդատներ նշանակելու համար, իժէ նրանք կանխաւ պատրաստած չունեն կանդիդատների ցուցակը: Իւրաքանչիւր մուտքի տունակի վրա նշանակվում են ներկայացնողի ձայների թիւը:

§ 3. Ընտրողները մտնելով նիստի ղաջիժը ժողովի նախախաչին ներկայացնում են ձայնաւորներ տաճարիված կանդիդատների ցուցակը, որը նախադաշը գցում է ներկայ եկող ընտրողների ներկայութեամբ ուր-նայի մէջ: և ապա նախադաշի ժողովը բացելուց կէս ժամ յետոյ, սկսվում է ցուցակների որոշումը և ընդհանուր կանդիդատական ցուցակ կազմելը: Աւելայի մէջ ձգած ցուցակների որոշելը սկսելուց յետոյ, նոր ցուցակներ չեն ընդունվում:

§ 4. Ձայնաւորներ տաճարիված անձներ, որոնք չեն նշանակված ընտրողական ցուցակների մէջ հանվում են կանդիդատներ թիւից:

§ 5. Ժողովի ղաջիժում բացի իւրաքանչիւր կարգին պատկանող ընտրողներից և մամուլի ներկայացուցիչներից, ոչ չէ թոյլատրվում, բայց հասարակութիւնը կարող է թոյլ տրված լինել ընտրողներից առանձին, իժէ որ ղաջիժի բովանդակութիւնը կը թոյլ տայ:

§ 6. Գուէարկութեան համար բուէները բաժանվում են ձայների թիւով ժողովի նախադաշից և Ընտրողական ժողովի լիազոր անձներից:

§ 7. Ընտրողները հրաւիրվում են բուէարկութեան համար գալու կարգով: Այն ընտրողները որոնք գալիս են բուէարկութիւնը սկսելուց յետոյ նոյնպէս մասնակցում են բուէարկութիւնների մէջ: Այն ընտրողը որը բուէարկվում է ձայնաւոր ընտրվելու համար, երաւուր չունի բուէ ձգել իր բուէարկիղ արկղի մէջ:

§ 8. Գուէարկութիւնը վերջանալուց յետոյ սկսվում են ձայների հաշիւը, նրանից յետոյ ընտրողները իրաւունք չունեն մասնակցել բուէարկութեանը:

§ 9. Իւրաքանչիւր արկղի մէջ գտանված բուէների հաշիւը վերջացնելուց յետոյ, ընտրողական թերթի վրա նշանակվում են իւրաքանչիւր կանդիդատի ազգանունի հանդէպ ընտրող և չընտրող բուէների վերջին թիւը: Արկղի բուէների հաշիւը վերջացնելուց յետոյ թերթը ընկարագրվում է ընտրողական ժողովին և օտարաւորում են նախադաշը և ներկայ եղող ընտրողները:

ԳԵՐՄԱՆՆԵՐԷՆ ԼԵՋՈՒԻ և ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ փնտռում է դասերի համար կամ վաճառվ բնակարան և ուսուցիչ: Հարցնել կա-սիկական Գիմնազիայի գործաւարին:

2—5

ԳՐԻԳՈՐ ՆԵԱՒԵՆԵՆԻ ՊԵՏՐՈՍՏԻ ՀԵԳՈՒՍՏԵՆԻ ԽԵՆՈՒԹՈՒՄ ԵՐԵՒԵՆԵՆԻ ՀԵՐՊԵՐԵԿԻ ՎՐԸ

առաջվել են մեծ քանակութեամբ ՅՐԱԿԻ ՆԻ ՏՐԻԿՈՒ ՍԻՐԻՏԻԿՆԵՐԻ ՇՈՐԵՐ, որոնք ղազան ԱՌԱՌՈՏԵԱՆ ԺՕԿԵՏՆԵՐ, ձմեռային ՊԱԼՏՈՆԵՐ և ՎԱՐՏԻԿՆԵՐ, երկխայց հաղաւտներ, ՎԵՐԱԿՈՒՄ ԽԱՂԱՏՆԵՐ զարդերով, նոյնպէս ընդունվում են ՊԱՅՈՒԵՐՆԵՐ զինուորական և քաղաքական հաղաւտների համար: Յոյս ու-նեմ, որ ինչպէս պատուիրողները նոյնպէս է գնորդները ՔԱՂԱՔԱՆ ԿԸ ՄԵԱՆ:

12—75

Լոյս տեսաւ և վաճառվում է Կենտրոնա-կան և պ. Զ. Գրիգորեանցի զրաւաճառա-նոցներում: ՌԵՆԵՆՆԻ գործ Յրանց Հոֆմա-նի, թարգ. Վիշապազուն զինն, է 40 Կ:

2—6

«ՄՇԱԿԻ» ԽՐԱԳՐԱՅԱՆԸ հարկաւոր է մէկ ԼՐԱԳԻՐ ՏԱՐԱԾՈՂ: Պայմանները մասին կարելի է տեղեկանալ ԱՄԵՆ ՕՐ առաւօտեան ժամի 10-ից մինչև 2 ժամը կէսօրից յետոյ: ԲՆ ԲԵԴԱԿՈՒ «ՄՍԱԿԻ» ՈՒՋԵՆԻ ՐԱՅՈՈՒՑԻԿԷ:

ԴԵՎԻՇԱ ինչեթ մէստո ԿՈՄՓԱՆՈՒՑԻ ԻՒԼԻ ԴՍԵՐՆԱՆԿԻ. Ադրես՝ Տարոկաթոլիկեսկայա ւուլիս, ձոմէ Կիո-վանի № 10

Մէկ ՕՐԻՈՐԴ ցանկանում է ընկերակցուհու կամ ՏՆԱՅԻՆ ՎԱՐՔՈՒՆԻՆԻ պաշտօն ունենալ: Հասցէն, Ստարոկատոլիկեսկայա փողոց, տուն 21 Կոլոմիտի, № 10

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄԸ

- Զ ա ք. Գ Ր Ի Գ Օ Ր Ե Մ Ն Գ Ի վաճառվում են
1. Մ ու Ր ա տ ե ա ն ց Ի — Պատմութիւն Հա-յասանեայց եկեղեցւոյ. գինն է . . . 2 ր.
 2. Տ է Ր Ա Ր Ր ա հ ա մ ե ա ն — ՕՐԱՅՈՑՑ 1879 թ. 12 Կ.
 3. Շ ե Ր ա գ ա ն ե ա ն ց. Գ. անեկոտ-ներ 50 Կ.
 4. Վիշապազուն. Ուրնէ (Յրանց Հոֆման) 40 Կ:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Վաճառվում են, ի միջի այլոց, հետևեալ գրքերը՝

Բ. Կ.	Բ. Կ.
1. Տիւզէնցեան՝ Տոմարադիտութիւն կազմ. 78 թ. 2 25	ճանապ. ծախ. 2 60
2. Մերենց Թորոս Լևոնի, պատ. վէպ 1	— — 1 20
3. Խուրաբաշեան բազմիք հայերէնից ռուսերէն երկու հատոր, կազմած (սակաւթիւ). . . 7	— — 7 60
4. Յրանց Հոֆման Ուրնէ, վէպ. — 40	— — — 50
5. Косовичъ Мет. Олендорфа для изученія французскаго языка 78 г. 3	— — 3 40
6. Ахвердовъ Арменія въ V вѣкѣ 1	— — 1 20
7. Т. Аконовъ современное Арм. общ. въ Оттоманской имперіи. 40	— — — 50
8. Ստացված են բազմաթիւ հայերէն գրքեր, թէ ինքնուրոյն և թէ թարգմանա-կան, Կ. Պոլսոյ և Զմիւռնիոյ տպագրութիւնը:	
9. Շուտով կը սկսվի վաճառվել եղբէր Վարդանանց պատերազմի պատմութեան նոր տպագրութիւնը, ըստ Անձևացեանց օրինակի: Տպագրութեանը բարեհաճեց հակէ Նորին Սրբազնութիւն Գարբիէ Արքեպիսկոպոս Ս. յիւզեանը: տպագրված է ամենայն զգուշու-թեամբ և ընտիր թղթի վրա: Հասցէն՝	

Въ Центральную книжную торговлю. Въ Тифлисѣ.

Թիֆլիսի Քաղաքային Դուռայի վճռի հիման վրա, որ կայա-ցաւ նոյեմբերի 16-ին, ընտրողական ժողովքները, եկող չորս տար-վայ համար Դուռայի ձայնաւորներ ընտրելու նպատակով, կը կա-յանան:

I կարգի համար Դեկտեմբերի 12-ին Քաղաքային Դուռայի ղա-լիճում, Եղաբաթի տանը, Սերգիեվսկի փողոցի վրա: Նիստը սկսվելու է առաւօտեան ուղիղ ժամի 10-ին:

II կարգի համար Դեկտեմբերի 15-ին Թիֆլիսի Սօբորանիայի ղալիճում, իշխան Մուխրանսկու տանը, Գոյովնսկի Պրոսպեկտի վրա: Նիստը բացվելու է առաւօտեան ուղիղ 10 ժամին:

III կարգի համար Դեկտեմբերի 18-ին նոյնպէս Սօբորանիայի ղա-լիճում: Նիստը բացվելու է առաւօտեան ուղիղ 10-ժամին:

Քաղաքային Ուղարկման յայտնելով սորա մասին յրնդհանուր գիտու-թիւն հրաւիրում է I կարգի պ. պ. ընտրողներին 12-ին Դեկտեմ-բերի, II կարգի 15-ին, իսկ III կարգի 18-ին նոյն ամսի շնորհ-բերել վերոյիշեալ տեղերը որոշված ժամին ժողովների նստերին:

Ընտրողների այբուբենական ցուցակը ստանալ ցանկացողները կա-րող են զիմել Քաղաքային Ուղարկային ամեն օր բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10 ժամից մինչև 2 կէսօրից յետոյ:

ОБЪ ИЗДАНИИ ВЪ 1879 ГОДУ

ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКОЙ ГАЗЕТЫ

„ТИФЛИССКІЙ ВѢСТНИКЪ“

ГОДЪ СЕДЬМОЙ

Въ 1879 году *Тифлисскій Вѣстникъ* будетъ издаваться ежедневно, за исключеніемъ дней послѣ праздничныхъ, по прежней программѣ.

Подписка на 1879 годъ открыта и принимается въ кон-торѣ редакціи на Эриванской площади, № 3.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

НА ГОДЪ. НА ПОЛГОДА:

Въ Тифлисѣ, безъ доставки. 10 р.	5 р. 50 к.
» » съ доставкой. 11 »	6 »
Съ пересылкой по Имперіи. 12 »	6 » 50 »
За границу по почтовому союзу. 15	8 »

Иногородные адресуютъ свои требованія въ Тиф-лисѣ въ редакцію *Тифлискаго Вѣстника*.

ՕՐԸՑՈՑՑ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ 1879 թ. համար ԵՐԵՒԱՆՈՒՄ կարելի է գնել Արսէն Մեկիւ-Քիշմիրեանցից:

Փակվում է Կազանի ՏԱՐԱՆՏԱՍ: Վորեն ցօրկայեա Նաբերեմայա փողոց կամարձի մօտ, տուն № 3: